Նախագահ
Ենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական

Տիրոջ ձայնը

Վարդապետություն և Ուխտերը հրավիրում են բոլոր մարդկանց ամենուր լսել Տեր Հիսուս Քրիստոսին (տես ՎԵՈՒ 1.2, 4, 11, 34, 25.16)։ Այն լի է Նրա ուղերձներով, նախազգուշացումներով և քաջալերող հորդորներով՝ տրված ընտրյալ մարգարեներին հայտնության միջոցով։ Այս հայտնություններում մենք կարող ենք տեսնել, թե ինչպես Աստված կարող է պատասխանել մեր հավատքով ասված աղոթքներին՝ հրահանգների, խաղաղության և նախազգուշացման ուղերձներով։

Մեր աղոթքներում մենք փնտրում ենք իմանալ, թե ինչ է Աստված ուզում, որ մենք անենք, թե ինչ պետք է մենք անենք, որ գտնենք խաղաղություն և երջանկություն այս և հաջորդ կյանքում և թե ինչ է սպասվում մեզ առաջիկայում։ Վարդապետություն և Ուխտերը լի է նմանատիպ հարցերին տրված պատասխաններով, որոնք հարցրել են սովորական մարդիկ և մարգարեները խոնարհ աղոթքով։ Այն կարող է թանկարժեք ուղեցույց լինել, որը կսովորեցնի մեզ, թե ինչպես պատասխաններ ստանալ մեր աշխարհիկ բարեկեցության և հավերժական փրկության մասին հարցերին։

Խոնարհությունը և Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը բանալին են։ Օլիվեր Քաուդերին Տիրոջից պատասխան ստացավ Մորմոնի Գրքի թարգմանությանը օգնելու իր ցանկության հետ կապված. «Հիշիր, որ առանց հավատքի դու ոչինչ չես կարող անել. ուստի, հավատքով խնդրիր։ Կատակ մի արա այդ բաների հետ. մի խնդրիր այն, ինչ դու չպետք է խնդրես» (ՎԵՈՒ 8.10)։

Վարդապետություն և Ուխտերում Տերը կրկին ու կրկին պահանջում է հավատք և խոհարհություն՝ նախքան Նա կտա Իր օգնությունը։ Սրա պատճառներից մեկն այն է, որ Նրա պատասխանները կարող է չգան այնպես, ինչպես մենք ենք ակնկալում։ Ոչ էլ դրանք միշտ հեշտ կլինի ընդունել։

Եկեղեցու պատմությունը և մեր նախնիների փորձառությունները լուսաբանում են այս իրականությունը։ Իմ նախապապը՝ Հենրի Այրինգը, ջերմեռանդորեն աղոթեց, որ իմանար, թե ինչ պետք է նա աներ, երբ նա լսեց վերականգնված ավետարանի մասին 1855 թ-ին։ Պատասխանը եկավ երազում։

Նա երազում տեսավ, որ սեղանի շուրջ նստած էր Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Էրաստուս Սնոուի և Վիլիամ Բրաուն անունով մի երեցի հետ։ Երեց Սնոուն, թվում էր, թե մեկ ժամ ուսուցանեց ավետարանի սկզբունքները։ Այնուհետև Երեց Սնոուն ասաց. «Հիսուս Քրիստոսի անունով ես պատվիրում եմ քեզ մկրտվել և այս մարդը [Երեց Բրաունը] կմկրտի քեզ»։[1] Իմ ընտանիքը երախտապարտ է, որ Հենրի Այրինգը հավատք ու խոնարհություն ունեցավ մկրտվելու առավոտյան 7:30-ին անձրևաջրեր ավազանում Սբ. Լոուիս Միսսուրիում՝ ԱՄՆ, Երեց Բրաունի կողմից։

Նրա աղոթքի պատասխանը չեկավ Տիրոջ պարզորոշ ձայնի միջոցով։ Այն եկավ գիշերով տեսիլքի և երազի ձևով, ինչպես դա եղավ Լեքիի հետ (տես 1 Նեփի 8.2)։

Տերն ուսուցանել է մեզ, որ պատասխանները նաև

կարող են գալ որպես զգացմունքներ: Վարդապետություն և Ուխտերում Նա ուսուցանել է Օլիվեր Քաուդերիին. «Ահա, ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում, Սուրբ Հոգով, որը կիջնի քո վրա և որը կմնա քո սրտում» (ՎևՈՒ 8.2):

Եվ նա այսպես քաջալերեց Օլիվերին. «Խաղաղություն չխոսեցի՞ ես քո մտքին այդ հարցի վերաբերյալ: Ավելի մեծ ի՞նչ վկայություն կարող ես դու ունենալ, քան Աստծուց» (ՎևՈՒ 6.23):

Վարդապետություն և Ուխտերը, Եկեղեցու պատմությունը և իր մկրտությունից անմիջապես հետո իր միսիայում Հենրի Այրինգի կողմից պահված պատմությունը ուսուցանել են ինձ, որ պատասխանները կարող ենք գալ որպես նախազգուշացման, ինչպես և խաղաղության զգացումներ:

1857թ. ապրիլին Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Փարլի Փ. Փրաթը այցելեց համաժողովի մի վայրում, որն այժմ Օկլահոման է՝ ԱՄՆ: Հենրի Այրինգը գրառել է, որ Երեց Փրաթի «միտքը լի էր ճնշող նախազգացումով . . ., չկարողանալով հասկանալ ապագան կամ վտանգավոր փորձությունից խուսափելու որևէ եղանակ գտնել»:[2] Դրանից անմիջպես հետո Հենրին գրառեց Առաքյալի նահատակության տխուր նորությունը: Երեց Փրաթը շարունակեց առաջ գնալ իր ճանապարհով՝ չնայած, որ ուներ վտանգի զգացողություն, ճիշտ ինչպես Մարգարե Ջոզեֆն արեց՝ Քարթեջ գնալով:

Իմ վկայությունն է, որ Տերը պատասխանում է հավատքով ասված խոնարհ աղոթքին: Վարդապետություն և Ուխտերը և մեր անձնական փորձը սովորեցնում են մեզ, թե ինչպես նկատել այդ պատասխանները և հավատքով ընդունել դրանք, լինեն դրանք առաջնորդություն, ճշմարտության հաստատում կամ նախազգուշացում: Ես աղոթում եմ, որ մենք միշտ լսենք և նկատենք Տիրոջ սիրող ձայնը:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Հենրի Այրինգի օրագիրը. 1835–1902» (հեղինակին պատկանող չտպագրված ձեռագիր):
2. «Հենրի Այրինգի օրագիրը. 1835–1902»:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

1. Խորհեք այս ուղերձի աղոթքի վերաբերյալ պարբերությունները միասին կարդալու մասին: Երբ դուք կարդաք, խնդրեք ընտանիքի անդամներին ուշադիր լսել, թե ինչպես է Աստված պատասխանում աղոթքներին: Խորհեք աղոթքի կարևորության մասին վկայելու վերաբերյալ:

2. Վարդապետություն և Ուխտերը լի է պատասխաններով՝ տրված ի պատասխան հարցերին, որոնք մարդիկ տվել են աղոթի միջոցով: Ի՞նչ կլիներ, եթե նրանց հարցերի պատասխանները (հայտնությունները) գրի չառնվեին: Խրախուսեք ընտանիքի անդամներին սովորել նկատել և հետևել Հոգու հուշումներին: Նրանք կարող են աղոթքի վերաբերյալ իրենց մտքերը գրի առնել իրենց օրագրերում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Լսել հուշումները

Մարիա Իզաբել Մոլինա

Մի երեկո իմ երիտասարդ զարմուհին տնից փախել էր, ուստի ես շտապեցի գնալ ու փնտրել նրան: Մինչ ես վարում էի մեքենան, ես աղոթում էի, որ Հոգին օգներ ինձ: Ես գիտեի, որ Աստված կպատասխաներ և կառաջնորդեր ինձ, և ես փորձեցի լսել Հոգու հուշումները: Սակայն, երբ ես ոչինչ չէի կարողանում լսել, ես սկսեցի հուսահատվել և զգացի, որ Հոգին ինձ հուշում չէր տալիս:

Չնայած, որ ես ուզում էի շարունակել փնտրելը, զգացի, որ պետք է մնայի իմ զարմուհու տան մոտակայքում: Ուստի ես որոշեցի մեկ անգամ ևս անցնել այդ տարածքով: Երբ ես կանգ առա խաչմերուկում, ես տեսա քայլող մի երիտասարդ աղջկա ուրվագիծ: Ես գտա իմ զարմուհուն:

Երբ ես դուրս եկա մեքենայից և վազեցի նրա մոտ, ես հասկացա, որ Հոգին առաջնորդել էր ինձ այդ ամբողջ ճանապարհին, օգնելով ինձ զգալ, որ ես պետք է մնայի նույն տարածքում: Քանի որ ես ակնկալում էի լսել հանդարտ ձայն, քիչ էր մնում, որ անտեսեի Հոգու հուշումը: Ես այնուհետև հասկացա, որ շատ անգամ մենք չենք լսի ձայն, սակայն մենք ինչ-որ բան կզգանք մեր սրտերում:

Ես շատ երախտապարտ էի Հոգու առաջնորդության համար: Իսկապես Նա միշտ այնտեղ է; Ինչպես ասվում է սուրբ գրություններում. «Սուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը» (ՎևՈՒ 121.46):

Եթե մենք արժանի ենք Հոգու առաջնորդությանը և ուշադիր ենք, մենք կարող ենք գործիքներ

դառնալ Աստծո ձեռքում, որ բարիք անենք շատ մարդկանց: Հոգու մշտական ընկերակցությամբ մենք կիմանանք ուղին, որով պետք է գնանք:

ԵՐԵԽԱՆԵՐ

Աղոթքի հետ կապված արկած

Նախագահ Այրինգը ուսուցանում է, որ աղոթքները կարող են պատասխանվել տարբեր եղանակներով: Դուք կարող եք արկածներ ունենալ, երբ ուսումնասիրեք սուրբ գրությունները՝ այդ եղանակներից որոշները գտնելու համար:

Բացեք ներքևում տրված սուրբ գրություններից յուրաքանչյուրը: Ձեր օրագրում մի քանի բառ գրեք, որ նկարագրեք, թե ինչ են ասում այս սուրբ գրությունները աղոթքին տրված պատասխանների վերաբերյալ:

Դուք կարող եք նաև գրել ձեր օրագրում ձեր իսկ ունեցած փորձառությունները պատասխանված աղոթքների վերաբերյալ:

Հովհաննես ԺԴ.26

Վարդապետություն և Ուխտեր 6.22-23:

Վարդապետություն և Ուխտեր 8.2

Վարդապետություն և Ուխտեր 9.8-9

Առակաց 8.10–11

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/12: Թարգմանության հաստատումը. 6/12: *First Presidency Message, January 2013*-ի թարգմանությունը: Armenian: 10661 201

Միսիոներական աշխատանք

Ուսումնասիրեք այս նյութն աղոթքով և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը:

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Վերջին օրերի սրբերը առաջ են ուղարկվել, «որպեսզի աշխատեին [Տիրոջ] այգում՝ մարդկանց հոգիների փրկության համար» (ՎևՈՒ 138.56), որը ներառում է միսիոներական աշխատանքը: Մեզ հարկավոր չէ պաշտոնական միսիայի կոչ ավետարանով կիսվելու համար: Մեզ շրջապատում են մարդիկ, ում կյանքը կօրհնվի ավետարանով, և երբ մենք պատրաստենք մեր անձերը, Տերը կօգտագործի մեզ: Այցելող ուսուցիչները կարող են գրկաբաց ընդունել իրենց հոգևոր պատասխանատվությունները և օգնել «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Երբ Մարգարե Ջոզեֆ Սմիթը 1842թ. կազմակերպեց Սփոփող Միությունը, նա ասաց, որ կանայք չպետք է միայն հոգ տանեին աղքատների համար, այլ նաև փրկեին հոգիներ:[1] Սա շարունակում է լինել մեր նպատակը:

«Տերը . . . վստահում է վկայությունը ճշմարտության մասին նրանց, ովքեր կկիսվեն ուրիշների հետ», - ասել է Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը: «Նույնիսկ ավելին՝ Տերը սպասում է, որ Իր Եկեղեցու անդամները բացեն [իրենց] բերանները բոլոր ժամանակներում, հայտարարելով [Նրա] ավետարանը ցնծության հնչումով» (ՎևՈՒ 28.16): . . . Երբեմն վկայության մեկ հատիկ արտահայտությունը կարող է շարժման մեջ դնել իրադարձություններ, որոնք կազդեն ինչ-որ մեկի կյանքի վրա հավերժության համար»:[2]

Սուրբ գրություններից

Վարդապետություն և Ուխտեր 1.20–23, 18.15, 123.12

Մեր պատմությունից

Նախկին Չեխոսլովակիայից Օլգա Կովարովայի վկայությունը անդամի միսիոներական աշխատանքի օրինակ է մեր Սփոփող Միության պատմությունից: 1970-ականներին Օլգան դոկտորի գիտական աստիճան ստացող ուսանող էր և ծարավ էր ավելի խորը հոգևոր կյանքի: Նա նկատեց 75-ամյա Վերջին Օրերի Սուրբ Օտակա Վոջկովկային: «Նա հայտնվեց ինձ իր յոթանասունհինգ տարեկան հասակում, սակայն իր սրտում մոտավորապես տասնութ էր և ուրախությամբ լի», - ասել է նա: «Սա շատ անսովոր էր Չեխոսլովակիայում ցինիզմի այդ ժամանակաշրջանում»:

Օլգան հարցրեց Օտակարին և նրա ընտանիքին, թե ինչպես էին նրանք ուրախություն գտել: Նրանք ծանոթացրեցին նրան այլ Եկեղեցու անդամների հետ և տվեցին նրան Մորմոնի Գիրքը: Նա կարդաց այն անհամբերությամբ և շուտով մկրտվեց ու հաստատվեց: Այդ ժամանակից սկսած Օլգան բարենպաստ ազդեցություն է գործել քաղաքական ճնշումներով և կրոնական հալածանքներով լի աշխարհում: Նա ծառայել է որպես Սփոփող Միության նախագահ իր փոքրիկ ճյուղում և օգնել է փրկել ուրիշների հոգիները՝ բերելով նրանց դեպի Քրիստոսը:[3]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 453:
2. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Սպասելով դեպի Դամասկոս տանող ճանապարհին», *Լիահոնա,* մայիս 2011, 76–77:
3. Տես *Իմ աղքատության դասերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը* (2011), 92-95:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ես հետևո՞ւմ եմ Սուրբ Հոգու հուշումներին, երբ կիսվելով իմ վկայությամբ քույրերի հետ, ում ես այցելում եմ:

2. Ինչպե՞ս եմ ես օգնում իմ քույրերին սովորել ավետարանը:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/12: Թարգմանության հաստատումը. 6/12:
Visiting Teaching Message, January 2013-ի թարգմանությունը: Armenian: 10661 201